ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

4 ապրիլի 2025թ. թիվ 167-Ա

Ա.ՏՈՆՈՅԱՆԻՆ «ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԼԵՌՆԱՎԱՆԻ
ՀՈՎՀԱՆՆԵՍ ԱՎԵՏԻՍՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ»
ՊՈԱԿ-Ի ՎԱՐՉԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՄԱՍԻ ՀԱՄԱԿԱՐԳՈՂԻ
ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2023 թվականի մարտի 2-ի «Պետական հանրակրթական ուսումնական հաստատության վարչատնտեսական մասի համակարգողի նշանակման կարգը հաստատելու մասին» N 259-Ն որոշմամբ հաստատված հավելվածի 3-րդ կետով, հիմք ընդունելով ՀՀ Լոռու մարզպետի 2025 թվականի մարտի 11-ի թիվ 123-Ա և 2025 թվականի ապրիլի 3-ի թիվ 163-Ա որոշումները, հաշվի առնելով Ա.Տոնոյանի համաձայնությունը՝

Ո ր ո շ ո ւ մ եմ.

«ՀՀ Լոռու մարզի Լեռնավանի Հովհաննես Ավետիսյանի անվան միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի տնօրենի պարտականությունները կատարող Ալինա Կորյունի Տոնոյանին 2025 թվականի ապրիլի 4-ից նշանակել ««ՀՀ Լոռու մարզի Լեռնավանի Հովհաննես Ավետիսյանի անվան միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի վարչատնտեսական մասի համակարգողի պարտականությունները կատարող՝ մինչև օրենքով սահմանված կարգով «ՀՀ Լոռու մարզի Լեռնավանի Հովհաննես Ավետիսյանի անվան միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի վարչատնտեսական մասի համակարգողի նշանակումը:

X

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ Ա.ՂԱԶԱՐՅԱՆ

2025թ. ապրիլի 4
ք.Վանաձոր